

Ու կարծեմ թէ ըստ կրօնաւորները վանքերուն,
 Այս իրիկուն
 Երկարօրէն աղօթիլէ ա'լ յուսահատ՝
 Բոլորը մէկ՝ մոլախինդէ գինով՝ կը վախճանին,
 Ու հիւանդանոցին բոլոր անբուժելիները
 Մոռի երկնքէն վրայ, անօգուտօրէն ու երջանկօրէն,
 Գիշերներով իրենց ատողերը փնտնեցին...

Ո՛վ գիտէ հովերը ե՛րբ, ե՛րբ պիտի դադրին
 Ու մինչեւ ե՛րբ նաշուածքները պիտի շարունակուին
 Լքուած հիւանդներուն,
 Հիսուսորարար արդէն մեռած աստղերէն անդին:

Ու այս բոլորին, այս ամենուն
 Հոգեվարքները ամբողջովին,
 Ու ցաւերը տրամած անասուններուն,
 Դանդաղօրէն, դանդաղօրէն իմ ներսիդիս կը փոխադրուին:

Բարիք

ԱՏՈՄ ԵՄԱՐՃԱՆԵՆԱՆ



ԳԵՐՄԱՆ ՔԱՂԱՔԱՆԱՌԻԹԻԻԼԸ ՏԱՀԱԿԱ-
 ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻԻԼԸ
 ՀԱՅՅԵՐԻ ՀԱՄԱՐ (*)

1870—71-ի ֆրանկո-պրուսական պատերազմից յետոյ, երբ Գերմանիան յաղթող հանդիսացաւ, Տաճկաց յայտնի քաղաքագետը, Ալի փաշան, ասաց Պրովէշ-Ստոնին, Պալսի աւստրական զինպանին. — «Պրուսիան կ'աշխատէ Աւստրիան իրան ընկերակից անել: Այս հանգամանքից յտույզ կը զայ Բարբադոնի Դրան համար այն պաշտպանութիւնը, որից նա այսքան ժամանակ զրկուած էր»:

Շատ կարելի է որ Ալի փաշան արդէն այն ժամանակ հասկանում էր թէ գերմանական կայսրութեան հիմնուելուց յետոյ, առ դառնալով մի նոր եւ հանդուած, ինքն իրան պահելու եւ պահպանելու համար՝ հանդամանքներ ի նոսաճօղ պիտի հասնէր այն դրութեան ուր անկաւրելի է լինում բաւականաւ միայն նեղ եւ րոպական քաղաքականութիւնով եւ պրանից է զայիս խառնուել տիեզերական քաղաքականութեան յորձանքին մէջ:

(*) Գերման քաղաքականութեան մասին արդէն առիթ էնք ունեցել գրել եւ Վոլֆը Յոգորենիէս ուսու թերթին մէջ:

Այդպէս էլ եղաւ. այն Գերմանիան որ քառասուն յիսուն տարի սորանից առաջ մասնաւորապէս զբաղած էր իւր ներքին գործերով, ընտանեացարար մնացած պետութիւններուն անհանդստութիւն չէր պատճառում: Ոչ ոք չէր սպասում, որ այդ ներքին քաղաքական խմորումից մի լուրջ եւ վտանգաւոր բան կարող է յառաջ գալ: Կարծես թէ Բիսմարկը, որը, զիս գերմանական քաղաքականութեան վարիչը դառնալուց առաջ՝ եւրոպական դառնալու մայրաքաղաքներում զինպան էր եղած, կարծես թէ նա ցրել էր այդ ազգերի ու շաղկապութիւնը եւ կաշկանդել էր նոցա: Ամենից շատը կուրացել էին «ճանաչուած անընդունակութիւնը», (ինչպէս Բիսմարկ գրում էր Բարիքից նաբոլէոն Գ. ի մասին) եւ Ռուսաստանը: Երբ վերադառնալով հրաշակուց գերմանական ցեղերի միութիւնը, զիս հանուր կայսերական թաղի տակ, այն ժամանակ միայն Բիսմարկի «վարժապետ»ը, ուսու իշխան Գորչակովը (*), հասկացաւ ո՛րքան մեծ քաղաքական սխալ էր յափշտակուել եւ իր «աշակերտ» թոշյաարութեամբ պահել Սեւ Մովսիսը: Վերջ պատերազմական նաւատորմ, ո՛րքան թանկ ծախեց Բիսմարկը իր օգնութիւնը Ռուսաստանին 1863 թուի Լինհայ ապստամբութեան ժամանակ—որպէս զի Ռուսաստանը չէր

(*) Բիսմարկը շատ անգամ իր մասնաւոր շտապագործութեան մէջ իշխան Գորչակովին անուանում էր «վարժապետ», «վարպետ»:

խանգարէ Գերմանիային ջախջախել Յորմանսան, Ռուսաստանի արեւմտեան սահմաններում ստեղծուեց մի նոր հզօր պետութիւն, եւ ամբողջ ներքապան լուծեցեալն հայտւում էր թէ ինչպէս «Իւր միջավայրում բարձր տեղը (ընդհանր) կատարեցանուում էր մի հսկայական մարտիկ»։

Մինչեւ 1871, Գերմանացիները քաղաքական արողով դիտակցութիւնը եւ հետաքրքրութիւնը պտղաւում էր սա՝ դադափարի շուրջը—գերմանական ցեղերի միացումը. այդ ցանկութեամբ որը զեռ այս դարու սկզբից արտայայտում էին դերմանական բանաստեղծները եւ հրապարակարկումները, ծարաւը էր Գերմանացիների սիրտը, 1871 տարին զովացրեց այդ ծարաւը։ Հասնելով իւր նպատակին, իւր իրձին, գերմանական «Միքայել»ը բնականաբար իւր աչքերը պտտի դարձնէր արեւել ուրիշ հարցերի վերայ, այսինքնաւանդ որ նոր «Միքայել»ը այլեւս առաջուկ «Միքայել»ը չէր։ Դաշնակցութիւններով եւ ուսգրադետական արտակարգ ուժերով ապահովացնելով իրան երկարատեւ խաղաղութեան տարիներ, ունենալով իւր մէջ առողջ եւ ներքին բազմակերպ զարգացման համար վերին աստիճանի նպատակաւ հանդիմանքներ (փոքր կեդրոններ, սահմանադրական պայակատութիւն), նոր Գերմանիան, ոչ թէ թուլացաւ 1871 թուականից, ինչպէս ոմանք ըստպատում էին, այլ ընդհանրապէս, չարուհականում էր աւելի եւ աւելի զօրանալ։ Նոր եւ ահագին ուժեր երեւան եկան, որոնք բարձր ձայնով պահանջում էին գործածութիւն։ Գերմանական տարիներ իւրոք արժիք դրանք, նորա հորիզոնը լայնացել էր, նորա ամուրը եւ վաշխակազմ թուերը պահանջում էին համապատասխան նոր գործունէութիւն։ Գերմանական պետութիւնը շուտ զարգեցաւ բաւականապէս այն բարձր չիբրքով, որին նա հասել էր—հաւասարակշիւ մէջառաջին դերը խաղալու։ Բխմարիք ինքը անուում է առաջին քայլը դէպ ի տիեզերական քաղաքականութիւնը։

Սան-Ստեֆանոյի զաշնադրութիւնից յետո՝ Անգլիայը Վենստոկով պահանջով նախարարապետ Բիւմարկը յայտնեց իւր յօժարութիւնը որդար դալալու» (միջնորդի) դերը ստանձնել Անգլիացիների եւ Ռուսների մէջ։ Բանալով Բերլինի Վենստոկովը, նա ասաց. «Մենք հաւաքուել ենք այստեղ, որպէս զի ենթադրեցինք Սան-Ստեֆանոյի զաշնադրութիւնը այն տէրութիւնների ազատ զննադատութեան, որոնք ստորագրել են 1856 եւ 1871 թուականների զաշնադրութիւնները։

Այս խօսքերից յետոյ անցան հազիւ 20 տարի եւ «արգար դալալու» դերը նորայլս այլեւս չէր բաւականացնում Գերմանիային... նա կամենում էր, կարծես, վերջապէս վարդգիլ դիմակը եւ գոռալ ամբողջ աշխարհին. «Նա էլ ունիմ իրաւունք տիեզերական հարցեր լուծելու»։ Նուկա տարի տարմից առաջ, Վերջէմ կայարը մեծ նաւատորմով ուղարկեց իւր եղբորը Չինաստան, մտադիր լինելով անձամբ այցելել Մոսակայ Արեւելքը։

Ինչո՞ւ այցելեց Վերջէմ Բ. Բ. Մուլթանին։ Երուսաղէմում Գերմանիոյ կայարը ասաց. «Փայլը չէ, զօրութիւնը չէ, հռչակը չէ, երկրային բարիքը չէ այն ինչ որ մենք պիտոտում ենք այստեղ, Մենք տեսնում ենք, հաղաւում ենք եւ ձգտում ենք՝ միայն մի բանի—ամենաբարձր բարիքի—մեր հոգիների փրկութիւնը»։ Եթէ Դիոգենէսը կենդանի լինէր, նա կը վերցնէր իւր լապտերը այն մարդուն փնտելու, որը հաւատում է այս խօսքերին։

Տաճկա-գերմանական ընկերակցութեան հարկաւորութիւնը յառաջ է դալիս Գերմանիայի հետեւեալ երեք պատակներից. ա. Մուլթանի պատերազմական, Բ. Ելենմոսական, եւ Գ. Գաղլիականական։

Ա. Քաղաքական-պատերազմական շանդեր. — Գերմանիայի քաղաքական հրապարակախօսներին զմեք հաւատալովում են, որ եթէ նոցա հայրենիքը մտողի բեռ չլինէր քաղաքականապէս աւելի զօրանալու, այնու ամենայնիւ ստիպւում է նա իւր ներկայի status quo-ն պահպանելու համար թողնել զուտ եւրոպական քաղաքականութեան նիւղ շաւիղը եւ անցնիլ տիւեզերական քաղաքականութեան լայն ճանապարհի վերայ։ Այդ հաստատումը կարծես որ ճիշդ է։

Դաւանալով առաջնակարգ մեծ պետութիւն եւ անսպասելի կերպով ներպայելի կեդրոնում պատերազմական բանակ տեղեկացի, Դիւմանիան զորանով ստիպեց եւ ստիպում է մինչեւ այժմ իւր մօտակայ եւ հեռավոր հարեւաններին լաւին ըլլոր որոշեր իրանց գոյութիւն ունեցող դրութիւնը պահպանելու համար։ Միեւնոյն ժամանակ, նկատուած է, որ ցեղական պղծակցութեան գիտակցութիւնը որքան դժուար է այնքան աւելի է ուժեղանում։ Այս երկու հանգամանքը յառաջ են բերում նոյն ցեղին պատանդող զաւանդան ժողովուրդների եւ տէրութիւնների համախմբումը, այնպէս որ ապագայ մեծ պատերազմը մի քանի պատամարտները երեւանալու են, որպէս պատերազմ անդադաւորանական, սլաւոնական, գերմանական եւ լատինական ցեղերի մէջ։ Գերմանիան այս վերջին ցեղը կարծես թէ արհամարհում է, եւ իւր ապագան բաւականին ապահով է համարում, եթէ յաջողի հնարքը մի քաղաքական ծրագիր, որով նա կարողանար կոտել անդադաւորանների եւ սլաւոնների դէմ։ Այս երկու ցեղերից առաջով ի նկատու են առեւտր Անգլիացիները եւ Ռուսները։ Անգլիացիներից վախենում են Գերմանացիք ինչպէս քաղաքական այնպէս եւ քաղաքակրթական տեսակէտից, Ռուսներինք միայն քաղաքական-պատերազմական տեսակէտից։

Գերմանիայի ներկայ տնտեսական դրութիւնը ստիպում է նորայն փնտել իւր համար նոր շուկաներ, եւ նոր յարմար երկրներ իւր պալթականներին համար. բայց այս ձգտման իրագործման մէջ՝ նա, ինչպէս եւ ուրիշ տէրու-

թիւները, յաջորդում են Անգղիային, որը գրեթէ աշխարհիս բոլոր նշանաւոր կէտերում զցել է իւր ճանկերը երկրագործարկելու մէջ, եւ որի հետ մրցել հնչող չէ Այդ խոստովանում են եւ Գերմանացիք, որոքա խոստովանում են որ Անգղիացիք աւելի եռանդուն, աւելի հաւրուստ եւ ձեռներէջ են և Նոքա ընդունում են որ Անգղիացիք մարդաբանական ամենաարժեք տրպարին են ներկայացնում եւ թէ այդ պատճառով նորաւոր սպանում են մինչեւ անգամ գերմանական ամբողջ ինքնատիպ քաղաքակրթութեանը՝ թուրքերը՝ թէ՛ տեսնական կան եւ թէ՛ հոգեկան(*), այս հանգամանքները թող չեն տալիս Գերմանացիք բացարձակ կերպով կռուել Անգղիայի դէմ, նամանակահատուկ որ ներդրում Արեւոտնը կարող է յաղթուել միայն ծովի վերայ և իսկ այդ ապարդիւրով՝ վերջեմ Բ. Բ. Նալաճանդի փառ երեւանակութեան, չէ էլ երազում համեմատուել Անգղիայի հետ:

Ի՞նչ անել:

Հարկաւոր է անուղղակի կերպով կռուել, երկրորդական եւ ծուռ մուռ ճանապարհներով խանարել Անգղիային բոլոր իւր արտաքին քաղաքականութեան ձեռնարկներում Բայց մինչեւ անգամ խուլ դիմադրութեան այս ձեռք համար հարկաւոր է դաշնակից, Իսկ—Ռուսաստան է, որի պատմական շանքը դարձնում են նորան Անգղիայի աննայելի թշնամի, եւ որի կամքը ամենից լուռ է ստանձարում Լոնտոնը, Այսպէս, գերման քաղաքական հրապարակաստների մեծամասնութիւնը ասում է, որ պէտք է շուղանի որպէս սկզբունք—բոլոր հասնախառնային հաղթելով միմեանք Ռուսները հնէ Անգղիացիների դէմ: Այս կարծիքը երեւան է գալիս որպէս պատմական Գերմանիայի Անգղիական կուսակցութեան կարծեքին: Անգղիասէրները՝ այն համոզմունքներն որ Ռուսաստանի ընկերութիւնը բոլորովին աւելորդ է, քանի որ անգղիական եւ գերմանական շանքի հակառակութիւնը կարող է լուծուել կամ միջամացուել մի որ եւ է քաղաքական համաձայնութեամբ: Սոքա ի միջի այլոց հաւատացնում են որ Ռուսաստանը չափազանց ներշնչուած է այն գիտակցութեամբ որ նա ունի պատմական «միտին» Արեւելքում, որ նորա սպառնաւապահովուած է: Ուստի նա կարեւորութիւն չգալով դաշնակից ունենալ, նա ոչ մի լուրջ համաձայնութիւն չի կայացնելու Բելգիայի հետ և Բայց չնայած այսպիսի մի քանի արամիտ փաստերի, Գերմանիան, իրականացնել, հակաւում է դէպ ի «անգղիաստեղծներ» պահանջները, եւ վերջինները իրաւացի են՝ առելով որ Անգղիան նոյնպէս առնադարակ չափազանց զգուշարութեամբ է ուրիշ տերութեան հետ մի որ եւ է համաձայնութիւն կայացնում, եւ թէ

դաշնակցութիւն կապել Տէմիդի բնակիչներին հետ՝ նշանակում է չինել «leonna societate» (առեւծային ընկերութիւն), շահում է միայն Անգլիան:

Սթէ Ռուսաստանը հարկաւ որ է Գերմանացիներին՝ որպէս դաշնակից Անգղիայի դէմ, նոյն Ռուսաստանի դէմն եւս նա պահանջ է դրում ունենալ մի ուրիշ ընկերակից, Պատասխանել որ Գերմանիա ունի արդէն ապահով դաշնակցութիւնը.—Երբեակ Ներգակակցութիւնը, — անտեղի է, որովհետեւ խոսքը այսպէս ոչ թէ ժամանակաւոր պատերազմական վտանգի մասին է Ռուսաստանի կողմից, այլ աւելի լայն, պատմական վտանգի մասին: Այս տեսակետից Ռուսաստանը սպանում է Գերմանիային (ինչպէս եւ ամբողջ Եւրոպային) քաղաքական, գինեւորական գերիշխանութեամբ (hegemonie), այնպէս էլ եւ պատմական հեղեղումով: Համաշխարհային տիրապետութեան միջոցները Ռուսաստանը քաղում է Արեւելքում, որովհետեւ նա ուժեղանում եւ մեծանում է Արեւելքի հաւելով: Այս հանգամանքից ընկալանաբար հետեւած է, որ ամենաուժեղ կերպով պէտք է նորան ընդգրկուել Արեւելքում, բայց Երբեակ ներգակակցութիւնը (ինչպէս կարեւոր ունենալով Աւստրիայի ոյժերը) այդ խնդրին էլ կարող համապատասխանօրէն ծառայել...

Առածի կարգ անցել է այժմ, որ Ռուսաստանը փախքում է, «իւր զղերի բոլոր հիւժեւերով եւ սրտի արիւնքով», ձեռք բերել Պոլսը: Յիմար է համարում նա որ կապածու է թէ արեւելեան հարցը իւր բնական լուծման եթէ Ռուսները, էրզրումը կը պատկանի Ռուսաստանին: Պոլսը մի ուժեղ տերութեան կարող է ապագային Փոքր Ասիայի իշխանութիւնը, այնպէս էլ էրզրումից կարելի է տրել Հայաստանի եւ Միջագետքի վերայ, իսկ Փոքր Ասիայի եւ Միջագետքի տրելը անսոսնաբար է, ինչպէս հաւատացնում են արդէն մի քանի քաղաքագէտները: Դէպ ի համաշխարհային տիրապետութիւնը՝ դէպ ի պիտի նկատել թէ Ռուսաստանը, աւելի քան ուրիշ ու եւ է պետութիւն, ունի շանք այդ երկրները նուաճելու: Գերմանացիները համար այս յոռեանակալ կշռադատութիւնները աւելի մտալու է են հետեւեալ հանգամանքից: Այն պետութիւնը, որ իր աշխարհագրական դիրքով պիտի կարողանար զիմադրել Ռուսաց արեւելեան տարածման հետեւող հետադարձ արտաշարում է իւր մէջ այնպիսի օրիպտիկներ, որոնք թող չեն տալիս կոյր կերպով ապաւինել նորա վերայ այդ տեսակետից, Խոսքը Աւստրիայի մասին է և Կարելի է ապահովուել, որ թէ համամասնեց Ռուսաստանի եւ Աւստրիայի անցեալները, կը տեսնենք որ դոյս պատմական վիճակները երեւան են հանում բոլորովին հակադրական ձգտումներ, նշաններ և Առաջինը դեռ եւս ամբողջացումի (integration) ճանապարհի վերայ է, երկրորդը՝ կազմալուծումի (désintégration) :

(*) Յետադի պատմոր Առաւմտեւ գրել է վերին աստիճանի Տեսաբանը եւ տաղանդաւոր մի գիրք «Asia», որտեղ ի միջի այլոց ասում է, «Գերմանացիք ոչ մի ժամանակ չէ գաղութաւ թուրք կամ իսկու, իսկ Անգլիացիք առաջ նա խոնարհուած է եւ տեսնում է ինչպէս իւր երեւոյթը խոսում են անգղիներն:

Այն ժամանակ երբ Ռուսաստանը ուժեղանում է, Աւստրիան, այդ sui generis «արեւելեան» տէրութիւնը (ինչպէս ցոյց է տալիս եւ խոսքը — Oesterreich — «արեւելեան թագաւորութիւն») զայլ առ զայլ զրկւում է իւր թագաւորութեան մարմին զանազան անպակներէց ։ Ինչ վերաբերում է նորա ներկայ դրութեան, նա համարեալ թէ յուսանալի է, որ ամբողջութիւնը վտանգի է ենթարկուած, որովհետեւ նա մաղի պէս ծակելուած է սըլաւոնական տարրով ։ Իսկ սլաւոնական դադափարը, «սլաւոնիզմը», չէնչոյ այն գործիքն է, որով Ռուսաստանը սպառնում է անդադար, թէպէտեւ անյայտ կերպով, Աւստրիային ։ Իսկ Ռուսաստանը վտանգում է որ թէ ինքը որ եւ է փորձ անէ դրաւել Պոլսը, Աւստրիան նոյն միջոցի կը գնայ Սալոնիկ ։ Բայց այս սպառնալիցի իրագործումը, իսկապէս, կարեւոր է նորանից թէ Ռուսները Պոլսը գրաւելու միջոցին ի՞նչ դրութեան մէջ կը լինի Աւստրիայի թագաւորութեան ամբողջութիւնը եւ ի՞նչ յաջողութիւն կ'ունենայ սլաւոնական քարոզչութիւնը ։ Եթէ Սալոնիկն ընկնի սլաւոնների անոգը, այն ժամանակ ճանապարհը այդ տեղով դէպ ի Արեւելքը — Փոքր-Ասիան, Սիրիան, Սուլթան—փախուած է Գերմանացիների համար ընդմիջող եւ Ռուսաստանը կը տանէ իւր բացարձակ յաղթանակը Արեւելքում ։

Իտալիան ։

Այս երկրից ելեւմտական սնանկութեան է մօտեցել, ինչ վերաբերում է նորա պատերազմական ոյժերին, որի համար ամբողջ երկրից հնձում է ծանր տուրքերի տակ ։ Այդ ոյժերն էլ մեծ յոյսեր չեն տալիս ։ Մտածեցէ՛ք որ Հռոմայեցիների ժառանգորդներ երեսան են գալիս այժմ որպէս ողորմելի հարկատուներ մի ափրիկեան իշխանի, Յաւիենայն դէպս Գերմանացիք լուրջ նշանակութիւն չեն տալիս Իտալիայի ընկերակցութեան ։ Իտալիայի դէպքը ուղղուած է աւելի Ֆրանսայի դէմ ։

Այսպէս դուրս է գալիս որ Երրեակ Նիգալկիցութիւնը հազիւ թէ կարողանայ ծառայել այն խնդիրներին, որոնք քոլիում են Գերմանիայ ներկայ դրութիւնից, իսկ այս դրութիւնը այն է որ Գերմանիան յրջապատուած է երեք կողմից ահուելի թշնամիներով — Ռուսաստանով, Անգլիայով եւ Ֆրանսայով... եւ այդ պատճառով Վիլհելմ Բ. Ը ձեռք է տալիս Արքիւլ Համդիին ։

Ռուսաստանի վերաբերեալ բոլոր այստեղ յայտնուած կյանքատուր իրաւոյնից յառաջ է գալիս հետեւեալ գաղափարն ծրագրի, որը Գերմանիայ յայտնաջ թագաքանկանութեան երկրորդ սկզբունքը կարող է համարուել (առաջինը Անգլիայի մասին էր) ։ Քոչոր եւրոպական հարցերու ընդդիմադրեց Ռուսաստանին ։ Հարկաւոր է ամրացնել Տաճկաստանը որպէսզի Ռուսաստան չ«սարքուի» այդտեղ ։ Իսկ դրա համար հարկաւոր է ուժեղացնել Աւստրիան, իսկ եւ սորա համար, որպէսզի նա քաջալերուի՝

ունենալով զօրեղ պաշտպան, պէտք է ուժեղացնել Գերմանիան, ամրացնել գերմանական տարրը Եւրոպայում ։ Ամէն ինչ այստեղ մէկ միւսի հետ կապուած է ։

Այստեղ յառաջ է գալիս մի դժուարութիւն ։ Ինչպէս գործել Տաճկաստանում, Ռժմ կողմը ըսնել, Ռուսաստանը թէ Անգլիայի ։ Մենք տեսնա՞ք որ Տաճկաստանի հարցին համաշխարհային նշանակութիւն են տալիս ։ Ռուսին հարկաւոր է դիմադրե՞լ Անգլիական ձգտումներին այստեղ, եւ Ռուսաց կո՞ղմը անհաղնալ ։ Բայց մենք այժմ նոյնպէս ցոյց տուինք, որ Գերմանիան պահանջ է զգուս արգելքներ զնել Ռուսաց յաջողութեանը՝ Մերձակայ Արեւելքում ։ Ռուսին ի՞նչ անել ։ Արդեօք, գուցէ ոչ մի կողմը չընտել եւ անկար զործել լոյժեղութւն ։ Կարելի է ասել որ, այցիկելով Սուլթանին, Վիլհելմ կայսրը այդպիսի մտադրութիւններ ունի, բայց իր քանի հրապարակախօսներ ցոյց են տալիս որ Գերմանիան դեռ եւս ուժեղ չէ այնքան որպէս դի անկախ (*) մրցէ Ռուսները, Անգլիացիները եւ մինչեւ անգամ Ֆրանսացիների դէմ ։ Այդ քաղաքականութիւնը մինչեւ անգամ վտանգաւոր է հանդիսանում, որովհետեւ նա հեշտ կարող է Ռուսներին միացնել Անգլիացիների հետ, Գերմանացիներին Տաճկաստանից քշելու համար ։ Ռուսին եթէ անկախ չէ ի կարելի գործել, ի՞նչ անել ։ Հրապարակել տաճկական քաղաքականութիւնից ։ Դա անկարելի են համարում գերմանական քաղաքագէտները, ի նկատի ունենալով այն շահերը որ ունի Գերմանիան Փոքր Ասիայում ։

Այս դժուար հարցը այսպէս է լուծուում ։

Տաճկական հարցը համաշխարհային նշանակութիւն ունի, եւ, համաձայն վերոյիշեալ ըսկերունքի, այդ հարցի մէջ Բերլինը ամենայն կերպով պիտի դիմադրէ Լոնտոնին ։ Այստեղ Գերմանիան չէ կարող գնայ Անգլիայի հետ միասին, որովհետեւ այս վերջինին աւանական քաղաքականութիւնը թլուրբիւրում, եւ թլուրբիւրին համաձայն երկրներում, կայանում է նորանում, որ այդ քաղաքականութիւնը քաջալուծ է տէրութիւնը՝ ապստամբեցնելով սորա հպատակներն ստրուկ եւ տառապանք տարբեր ։ Միաւրով Անգլիայի հետ, Գերմանիան կամայն ստրկուած կը լինի ի գործ զնել նոյն քաղաքականութիւնը ի վնաս իրան, որովհետեւ այդպիսի քաղաքականութիւնը աւելի է մօտեցնում Տաճկաստանի քաջալուելու օրը — իսկ Գերմանիան դեռ պատրաստ չէ այդ ժառանգութիւնից հրամայողական կերպով իւր մարդ պահանջելու ։ Կարելի է ասել որ նա մինչեւ անգամ այն աստիճան պատրաստ չէ, որ չէ կարող պահպանել այն կայունները եւ

(*) Այդպիսի անկախ քաղաքականութեան անյաջողութիւնը արտայայտուեց չէնց առաջին քաղաքականութեան հարցում ։

իրաւունքները, եթէ արքա նոյն իսկ քննադուին նորառնեալ չունի համապատասխան հաւատարմութեան քիչ քիչ դորանից՝ Գերմանիան վախճանում է, ինչպէս առաջինը վերեւ, Անգլիայի հետ դաշնակցութիւնով կրկնել Թրանսալպիներէ վիճակը եղիպատում։

Արդեւ հենց այս ընդդիմութիւնը ինկն ռուսիկեան վիեռնայի ժամանակ նշանակում է Ռուսաց կողմի բռնկը։

Ան եւ այս գոժուար հարցի լուծումը. այնպէս որ ոչ թէ ներգործական կերպով Գերմանացիք պիտու են ռուսական քաղաքականութեան՝ Պրուսիայի, այլ կրաւորական կերպով, միայն օգնութիւն անելով նոցա՝ Անգլիայիցիներէ դէմ եւ Բերլինի կառավարութիւնը արեւելեան մասագին չէ Ռուսաստանի carté blanche ստալ եւ ասել «արի քործիր»։ Ընդհակառակն ամբողջ իւր աշխարհը ձեռնարկութիւնները Փոքր Ասիայում՝ նպատակ ունի անկասկածելի կերպով գոժուարացնել Ռուսաստանին ընթացքը դէպ ի այդ կողմերը։

Գիւմանիայի բոլոր այդ ձեռնարկութիւնները որոնց նպատակն է Տաճկաստանի ամրացնելը, ատանձին անհանգստութիւն չեն պատճառում Ռուսներին, որովհետեւ, ինչպէս Ռուսաց աւանդական քաղաքականութեան եւ պատմական շահերին, որոնք պահանջում են ցանկանալ Տաճկաստանի թուլանալը, այս րուպէիս, ներկայումս, այդ թուլութիւնը նոցա հարկաւոր չէ, եւ մինչեւ անդամ անցանկանալի Ռուսաստան անկողն ցանկանալ է այժմ իսկապաութիւն, եւ Թուրքիայի թուլութիւնը միայն միջոց կը տայ Անգլիացիներին արեւելեան պլոտը քրեւրում ձկնելու որպէս։ Այսպէս մի հարուածով Վիլհելմ երկրորդի տաճկական քաղաքականութիւնը երկու նպատակ է սպանում, այսինքն արժանանում է Սուլթանի անվերջ շնորհակալութիւններին եւ չէ ըրելու ինկոյալ կայսրի բարեկամութիւնից։ Պիտի անտեսել այստեղ, որ անկասկած այն հաւատը որ քննադու է Պետերբուրգը Բերլինին՝ կ'ընդհատուի, եթէ «Տաճկաստանի ամրացնելը» լուրջ կերպարանք ստանալ, եթէ Թուրքիան այդ միջոցով քիչ շատ վերածնունդիւն ընդունակ դառնայ, կամ եթէ Գերմանացիք Փոքր Ասիան չինեն իրենց համար «պապուռնց տուն»։ Բայց եւ այս ղէպըւում, մեր կարծեթով, Բերլինի կառավարութեան համար գոժուար չէ լինելու Ռուսներէ կասկածը եւ անբաւականութիւնը ցրել, որովհետեւ Գերմանիայի գործունէութեան նշանները չըրջաւ Փոքր Ասիայում, այն անտակալից է որ հնչուութեամբ կարելի կը լինի մի որոշ համաձայնութեան դալ եւ մինչեւ անդամ Ռուսներէ անկողն չնդդակալութեան արժանանալ, երկու խօսք եւս Գերմանիայի տաճկական քաղաքականութեան պատերազմական շահերի մասին։

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, թէ գերմանական կայսրութիւնը ունի ահապին

եւ քաղաքական շահեր որոնք նա պիտի լուծի, այն հանգամանքը թէ նա չըջապատուած է զօրեղ թշնամիներով եւ թէ կարեւոր ղէպըւում գոժուար է բոլոր յոյսերը գնել Երբեքան Նիդալակցութեան վերայ, ընտանաբար նա աշխատում է ավէն պարզապէսնոր օգուտել իւր գիրքը ապամովելու համար։ Ինչ մի նկերը նա չէ կարող արհամարհել, եւ պիտի խոստովանի որ Տաճկաստանը պատերազմական տեսակիտեց դեռ իստ ուժեղ է, այդ ապագուցանեց 1877-78ի պատերազմը (մեր յեղափոխական գործիչները իրենց կարճատեսութեամբ Թուրքիայի քաղաքակրթական թուլութիւնից եզրակացրել են, որ նա պատերազմական տեսակիտեց նոյնպէս չնչին է, այնքան չնչին, որ հայկական հայրենիները հնչուութեամբ կ'ուշերչացնեն Տաճկաց գործերը)։

Ի հարկէ Վիլհելմը չէ կայացրել Սուլթանի հետ ոչ պատշաճադական ոչ էլ յարեակողական դաշնակցութիւն, բայց այնու ամենայնիւ Տաճկաստանը ռազմադիտական կողմից վերահորդելու ձգտելով, նա հետեւել է այն նպատակին, որ Թուրքիան ուժեղանալով, կը զգանայ Գերմանիային դաշնակից Ռուսաստանին դէմ։ Այն ժամանակ երբ Տաճկաստանը պատերազմական մտքով աւելի վառագար կը հանդիսանայ Ռուսաստանի աշքում քան թէ նա է այժմ, այն ժամանակ զորանով ստեղծուած կը լինի Ռուսաստանի համար աւելորդ հոգսեր։ Անպղծ ժամանակ, նորա քաղաքական ուղարկութիւնը ցրուած կը լինի, իսկ մի եւրոպական պատերազմի ղէպըւում նա ստեղծուած կը լինի պահել Տաճկաց սահմաններում աւելի շատ զօրք քան թէ այդ կը պահանջուի եթէ «Նիւանդ մարզը» թողուած լինել իւր վիճակին — յառաջդիմական անդամուծութեան։

Բ — Ելեւոսական շտեմեր։

Մենք չենք բերելու այստեղ զանազան Ռուս նշանները Գերմանիայի քնակչութեան անուամբ, իւր դիւրանտեսական ուժերը, եւ արհեստագործութեան պահանջներին վերաբերելով։ Մի հեղինակի հետեւեալ խօսքերը բաւականաչափ ամփոփ բացատրում են Գերմանիոյ տաճկական քաղաքականութեան անտեսական նշանակութիւնը։

«Մենք անող մողովութիւնը եւնք, Շուտով մեր թիւը կը ւնանի զԹուսի միլիոնի, եւ դորանից յետոյ՝ եօթնամասուն միլիոնի։ Այս միլիոնները ցանկանում են հաց եւ աշխատութիւն։ միայն Գերմանիայի արտով մենք եւրեք այլ եւս չենք կարող ապրել։ Որքան որ մեր գիւղատնտեսութիւնը բարձր աստիճանի վերայ կանգնած լինի, այնու աւելանալու մենք պիտի ունենանք աւելի շատ գործարաններ ձինիւրոյցներ, որոնք պիտի ձինն աշխարհային շուկայի համար։ Սա անհասկանալի է անտեսողներին, ձեռնարկուներին, կաճատականներին եւ աշխատաւորներին։»

Ուրեմն Գերմանիան պիտի լայնացնէ իւր շուկաները, փողեր բերէ հայրենիքը եւ դոցանով գնէ իրան հումար հաց եւ ուրիշ պիտոյքներ : Կարելի է բնական համարել , որ գերմանական քաղաքացիները , նպատակ ունենալով այս , իրանց ուշադրութիւնը դարձնել են Թուրքիայի , կամ աւելի ճիշդ ասած՝ Փոքր-Ասիայի վերայ Գերմանիան՝ ինչպէս եւրոպական տէրութիւն , նոր չէ , հին է , բայց որպէս առաջնակարգ մեծ պետութիւն՝ զիտ երկրատարր է : Այս պատճառով նորա ուժերը հազիւ թէ բաւական կը լինէին այն դժուարութիւնները յաղթելու համար , որոնք կապուած են այնպիսի նոր երկրներին «նոսաճման» հետ որոնք չափազանց հեռու են ընկած մայր երկրից , եւ իրանց բնաւորութեամբ չափազանց դանաղաւում են այս վերջինից , ինչպէս ամէն մի դորմ , մանաւանդ եւ զաղթային քաղաքակրթութիւնը պահանջում է երկարատեւ փորձառութիւն , միայն ընդհանուր քաղաքական խմաստութիւնը բաւական չէ :

Հետեւումներ գերմանական կայսրութիւնը պիտի նախադասէր ոչ-հեռուոր երկրները : Արդէն առաջին այս հանդիմանալի հիման վերայ Փոքր-Ասիայի ընտրութիւնը կարող է յաջող համարուիլ : Այս հանգամանքին միանում են ուրիշ հանգամանքներ , որինպէ , Բաղդադոյն Դրան «բնդունակութիւնը»՝ ազդեցութիւններ կրելու , Փոքր Ասիայի ընտրութեան յատկութիւնը առաւ փորձատրելու այն աշխատութիւնները , որոնք ուղղուած են նորա բարեօրոյն :

Նուաճումներ լինում են երկու տեսակով—պատերազմական եւ առեւտրական : Բացատրութիւնները պէտք չկայ , որ Գերմանիան առ այժմ կարող է ի նկատի ունենալ Փոքր Ասիայում միայն երկրորդը :

Ահա այն անտեսական նպատակները , որոնց իրազեկման վրայ աշխատում է այժմ գերման քաղաքակրթութիւնը Պոլսում .

ա . Գերմանական երկաթուղիներ շնչեկացնել Փոքր-Ասիայով եւ Միջագետքով :

բ . Գերմանական արուեստագործութեան բերքերը տարածել ամբողջ Տաճկաստանում :

Այս երկու վարչական նպատակներին միանում է եւ մի խնդիր , որը անաշխուժ զբաղեցնում է միայն հասարակութեանը եւ քաղաքական հրապարակախօսներին .

գ . Գերմանական զաղթականութիւններ հիմնել Փոքր Ասիայում :

Այս երեք նպատակները միմեանց հետ սերտ կապուած են : Փորձենք մեր ցոյց առած յաջորդականութեամբ ծանոթանալ այդ երեք ընդհանուր նպատակների հետ :

ա . 1888—1892 տարիներէ մինչոտեմ Գերմանական Բանկը (Deutsche Bank) երկաթուղի հաստատեց Հայդար Փաշայից մինչեւ Անգորա , 1893ին նոյն գրամատուծը իրաւունք ստացաւ չարուսական գիծը Էսկիէնդից մինչեւ Կոնիա եւ մեծ յաջողութեամբ կատարեց եւ այս ծրարագիրը : Այս ձեռնարկները մեծ օգուտ բերին

ինչպէս Փոքր Ասիային , այնպէս եւ Գերմանիային : Ինչ վերաբերում է վերջինին , բաւական է յիշել որ երկաթուղու բոլոր անհրաժեշտ ներթելներն շէ մասը վեր է առած գերմանական արուեստագործութիւնից :

Այժմ որպէս յայտնի է , Գերմանիան առաջարկում է որ իրան թող թուի առեւտրական մեծ երկաթուղի , գոյութիւն ունեցող երկաթուղու վերջին կէտից (Անգորա կամ Կոնիա) մինչեւ Բաղդադ : Այս զաղափարը Տաճկաստանի համար նոր չէ . նա արդէն քսան տարից ի վեր զբաղւում էր այն հարցով , որպէսզի մեծ երկաթուղի չլինուի Արշիպեղադոսի ափերից , ամբողջ Փոքր Ասիայով , բայց ինչպէս փողի պակասութիւնը , այնպէս էլ կատարական չըջաններում որոշ համաձայնութեան լացաւ : Կայտնի չէ մինչեւ այժմ խանդարում են այդ ծրագրի իրագործումը : Այդ անհամաձայնութիւնը հետեւեալն է . պատերազմական նախարարութիւնը , անհրաժեշտ համարելով նոր երկաթուղիներին համար այնպիսի մի ծրագիր , որով Ռուսաց զէժ մղուած ապագայ պատերազմում կարելի լինէր արագ հաւաքել Փոքր Ասիայի զորքերը Ռուսաց սահմանների մօտ , պահանջում է իւր ծրագրիներին իրագործուելը :

1 . Անգորա—Կեսարիա—Սվազ—Էրզրում .
2 . Կոնիա—Ադանա—Մարաշ—Հալէպ .
3 . Անգորա—Կեսարիա—Սվազ—Մալաթիա—Դիարբեկիր—Մուսուլ—Բաղդադ :

Այս գծերը պիտի լինին զիսաւոր երկաթուղական գծեր :

Այս ծրագրի գէժ , հանրային շինութիւններին նախարարութիւնը , ի նկատի ունենալով տրեստական շահեր , ցոյց է տալիս իւր հետեւեալ ծրագրով .

Դիւսուր գիծը .

1 . Անգորա—Կեսարիա .
2 . Կոնիա—Ադանա—Մարաշ—Հալէպ — Բաղդադ .
3 . Հալէպ—Դամասկոս :

Դեպք Ռուսաց սահմանները եւ Աեւ Մովսիսանով գծերը կարող է լինել եւ երկրորդական երկաթուղի , Թրքական հանրային շինութիւններին նախարարութիւնը իր ծրագրով այժմ առաջ ունի , հակառակ պատերազմական նախարարութեան , առեւտրական-տնտեսական շահեր :

Ինչպէս տեսնուած ենք , լուրջ հարցը նորանում է թէ ո՞րտեղ պիտի դարձնուի գլխաւոր ուշադրութիւն . Մեծ Հայաստանի , այսինքն Ռուսաց սահմանների , թէ Անատոլիայի հաւրապին մասերի վերայ :

Իսկ ահա դերմանական ծրագիրը .

1 . (Հիւսիսային) Անգորա—Կեսարիա—Սվազ—Մալաթիա—Սարբերկ—Դիարբեկիր—Մարդան—Նիզիքին—Մուսուլ—Էրբիլ—Կարկուլ—Բաղդադ—Բասրա (Շաթ-էլ-Արաբի մօտ) .
2 . (Հարավային) Կոնիա—Ատանա—Այնտար—Իրիզիկ—Ուրֆա—Դիարբեկիր—Մարտան—Նիզիքին , եւն . մինչեւ Բասրա :

Թէ ինչո՞ւ գերմանական գրամազլական

ընկերութիւնը մինչեւ այժմ չէ կարող որոշել իւր ծրագրերէն ո՞րը գերադասել, սորա պատճառները զանազան տեսակի են . այդ ընկերութիւնը հակուում է ղեկի ի հարաւային ծրագրեր, որովհետեւ հիւսիսայինը մեծ գծաւորութիւնը կարող է յառաջ բերել գերմանո-սակայան զապաքականութեան մէջ . բաց ի դորանից, հիւսիսային ծրագիրը ներկայացնում է աւելի մեծ ճարտարապետական գծաւորութիւններ, եւ աւելի թանգ պիտի արժեանայ քան հարաւայինը :

Սուլթանը, եւ Նըզդէի պատերազմական կուսակցութիւնը իր կողմից, թողնելով իւր սեփական ծրագրերը եւ ղեկավարուելով գերմանական ծրագրերէն, ընդհանրապէս յայտնում են Գերմանացիներին թէ՛ կ'ուզեն այնքան որ նոցա լոկոմոտիվները սլանային ղեկ է իջըրում, կ'որոշուէր հայկական լեռները : Այս պատճառով լաւականին զարմանալի է որ էրեւստ Բիւրիսիներէ անզղեական ծրագիրը, որ անազան ուրիշ ծրագրերի հետ նորերում Սուլթանին առաջարկուած էր, թէ՛ Սուլթանին եւ թէ՛ Բարձրագոյն Իրան առանձին ուշադրութիւնը դրած է . զարմանալի է որովհետեւ Բէյիւնիցերի նախազիծը համապատասխանում է աւելի գերմանական հարաւային ծրագրին : Գուցէ պատճառը պէտք է այն հանգամանքում փնտռել, որ Ռուսները աշխատում են այժմ ամէն կերպ Պոլսում ընդգրկմադրել որ եւ է «գերմանական» երկաթուղու ծրագրի դէմ՝ ճաճկատառում, եւ հակում ունին աւելի Ֆրանսական կամ անգղիական ծրագրերին, եթէ բոլոր առաջարկուած երկաթուղիների ծրագրերից մէկը ստիտափելի կերպով պիտի ստանայ իւր իրաւորումը : Ինչպէս Քայլեր մի թղթակից գրում էր Վիեննայից, Ռուսաստանը ամենեւին չէ ուզում որ Ս'իլգաքեղի լուրջ հարցի մէջ իսլանուի մի նոր պետութիւն—Գերմանիա, եւ կը ցանկանար Անգղիայի հետ ապագայ պատերազմում աղտեղ գործ ունենալ միմիայն Անգղիայի հետ :

Երկաթուղիների այս լուրջ հարցի ներկայ գրութիւնը այնպէս է, ինչպէս յայտնուած է Ալանիէի նախորդ համարում, այսինքն շատ հնարաւոր է, որ երեք մրցակիցներն էլ, այսինքն Անգղացիք, Գերմանացիք եւ Ֆրանսացիք, իմանալով ձեռք կը բերեն Բաղդադի երկաթուղու թոյլատրութիւնը : Այդ իրաւունքները մտադրուած է հետեւեալ համեմատութիւնով որոշել . 42 0/0 Գերմանացիք, 38 0/0 Անգղացիք, եւ 20 0/0 Ֆրանսացիք : Վերին աստիճանի հետադրերէ է որ, ինչպէս Նըզդէում ամպպէ էլ Բարձրագոյն Իրան մէջ, մի հակում կայ ղեկի ի անգղիական ծրագիր (Բէյիւնիցերին), Բէյլըրի Գործակալութեան Պոլսոյ ներկայացուցիչը յայտնում է որ թուրքերը, յարաբերութիւնները ղեկի ի Գերմանիան ստեղծ են, եւ ընդհակառակն ձգտում կայ չկորցնել, եւ մինչեւ անգամ գրաւել, Անգղիայի ընկերակցութիւնը :

Երեւի զաւել պատճառ, որ Գերմանական Դըրամատուրը միացել է Օսմանեան Իրամատան «Վիթթալ» ճիւղի հետ որպէս զի միասին մրցին Անգղիացիներէ դէմ : Ինչպէս վերջին հեռագիրները յայտարարում են, սեպտեմբեր 12ին այդ երկու Իրամատուրների մի յանձնախումբ ճանապարհ ընկաւ Պոլսից ղեկի ի Կոնստ, եւ այդուհից հարաւային նախագծի ճանապարհով (տե՛ս վերեւ) ղեկի ի Բաղդադ՝ նոր հետազոտութիւններ անելու, Գերմանական Քիօլիլիէ Ճաջրուկ լրագիրը աւսում է որ այդ հանգամանքից երեւում է թէ հիւսիսային ծրագիրը առայժմ թողուած է, եւ թէ այն գրամը որ պիտի ծախուի այդ յանձնախումբի վերայ (300-400 հազար մարկ) ցոյց է տալիս որ ձեռնարկողները լուրջ են զբաղւում իրանց խնդրով :

Այս յանձնախումբը յամենայն ղեպս իւր հետազոտութիւնները չէ վերջացնելու մարտ ամսից առաջ :

Անկախ այս օգտից, որը ցոյց տուինք վերեւ, այսպիսի ձեռնարկութիւնները մեծ նշանակութիւն ունին եւ Գերմանիոյ հեւեւ մտաւոր չանիւր եւրոպոյ կէտի համար՝ ճաճկատառում, այսինքն՝ Գիտնական արուեստագործութեան արտադրութիւնները տարածել արեւոյ Տաակաստանում :

Ծրագրուած երկաթուղիները կարճ միջոցում կը զարգացնեն երկրագործութիւնը Փոքր Ասիայում, կը հարստանան բնակիչներին եւ կը կարգաւորեն նոցա կեանքը, նոցա մէջ նոր ձգտումներ եւ պահանջներ առաջ կ'ընեն, եւ գործունից յետոյ արդէն գերմանական վաճառականները իրենց ապրանքներով կարող կ'ըլինին մեծ յաջողութիւն ունենալ այստեղ . իսկ այժմ, երբ Անտառլիայի բնակիչները, գիւղացիք, չափազանց աղքատ եւ առանց պահանջների են, արուեստագործութեան առարկաները այստեղ մեծ գոտարութեամբ պիտի տարածուին . Հայդար Փայա—Անգորա եւ Էսկիլիւնիլ—Կոնստ գոյութիւն ունեցող գծերը ապագայից են այդ :

Ի հարկէ՛ բաց ի այս երկարատեւ միջոցից, Գերմանացիք ամենայն միջոցներ կ'գործադրեն, որպէս զի ներկայումս յետ մղեն օտար վաճառականներին ապրանքները Պոլսում եւ ուրիշ զապաքանքում, Վիլնիւի ընկերակցութիւնը Սուլթանին հետ մեծ օգուտ թիւն կարող է հասցնել այդ ձգտումին :

Պայիս ենք երրորդ հարցին, այսինքն՝ Գ.—Գաղղիականիս հարցին :

Ինչպէս ասացինք, Բելլինի կառավարութիւնը այժմ ամենեւին չէ զբաղւում այս հարցով, եւ ընդհակառակն կարելի է սպասել որ նա թշնամարար կ'ըլլարեւորէ այս ձգտումը, երբ իւր հպատակները ձգտին այսպիսի բան իրազեկել Փոքր Ասիայում, որովհետեւ դորանով ինչպէս Սուլթանի այնպէս էլ առաւ կառավարութեան մեծ ղեգճուութիւններ կարելի է պատճառել, Այսու ամենայնիւ այս զապաքան

կանական հարցը շատ է հետաքրքրում մի շարք հրապարակախոսներին եւ թաղաքատնտեսութեան գիտնականներին (այստեղ նկատի է առնուում, ի հարկէ, ոչ թէ մասնակի զաղթումներ, այլ կազմակերպուած գաղթականութիւնը (colonisation) :

Այսպիսի գիտնականներ ինչպէս Թր. Լիւթ, Բոշէր, Բոգաբերթուս, Ֆրանսագի Լըրուս-Պուլիէօ, յետոյ գիտաւորականները որոշք լաւ ծանօթ են Թիւրքիայի հետ, Մուլթէն, Ծոն Տէր Կողջ փաշան եւ ուրիշները, այն կարծիքն են յայտնում, որ Փոքր-Ասիան մեծ ասպարէզ է ներկայացնում գերմանական գաղութներին համար, իսկ ոմանք մինչեւ անգամ հաստատ կերպով ասում են, որ Փոքր Ասիան ապագայում կը ներկայացնէ մի գերմանական գաղութ :

Այս ձգտումներին մասին երկար չենք խօսելու այստեղ, որովհետեւ նոքա շատ կանոնաւոր մինչեւ անգամ Գերմանացիների համար, բաւական է ցոյց տալ որ մեծ անհամաձայնութիւններ կան գաղութների ճշդի վերաբերմամբ. օրինակ՝ մէկ հեղինակը ցոյց է տալիս Փոքր Ասիայի հիւսիսային մասերում յարմար տեղեր գերման գաղթականութեան համար, այսինքն Ատաբազարի հարաւային մասերը, Սաքքարիա գետի ափերը, Էսկիլեհէրի եւ Գուտայի շուրջը, յետոյ Պուրասը գետով գէպի Անգորա, միւրը ցոյց է տալիս Ալլարիայի երկիրները, իսկ ոմանք, — Կիլիկիան, եւ անհասարակ արդիւն եւ ապագայ գերմանական երկաթուղու գծերի եղբրքը գտնուող երկիրները, Գերմանիայի ներգործական միջամտումը Արեւելեան Հարցին մէջ, եւ իւր բոլոր ծրագրերն, անկասկած, մեծ նշանակութիւն ունին Հայերի համար : Դորա մասին հետեւեալ համարում :

Պարիզ ԳէՈՐԳ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԷՕԶԵԱՆ



ԼԱՅՑԳՐՈՔ



Ը

ՆԱՐԵԿԱՑԻՆ

Ա

Միհնաորին հեծութիւնէն կրծաբախ
Կը զըզըրդի խոռոչն անլոյս, փապար խոր,
Տըրտում հոգւոյ զուր ստուերալից քարափոր,
Ուր ամենայն ծայր զըզլման ողբ է դանդաղ :

Հող ոչ կանթեղ կայ, ոչ ճաճանչ մանրամաղ՝
Այլ խաւարի ցաւ եւ կական վըշտաւոր :
Հող առ Աստուած կ'աղաղակէ սուրբ Գրիգոր,
Ու կը քըսէ գետնին վրայ ճակատ պաղ :

Փըրկէ՛ դանի, միայնութեան մո՛ւլթ քաւիչ,
Բազմորոգայթ փորձութիւնէն մեղսաշատ :

Փըրկէ՛ դանի՝ աղիքաւոր սըրտի ճի՛նչ :
Եթէ՛ դանի պըղծեց բոցոտ ժառն խորհուրդ,
Թող գագաթին վըրայ վերէն աննդհատ
Ի յնայ կաթի ապաշխարման շիթ մը ցուրտ :

Բ

Կ'աղաղակէ այսպէս՝ Աստուա՛ծ, յոյս սրտիս,
Կը պապակիմ ճառագայթիթ սըրբութեան :

Տեսութեանդ մի՛ զիս զըկեր յաւիտեան,
Ու բարկութեանդ կապանօք մի՛ կապեր զիս :

Գրե՛ծ ու սին կեանք մը տըւիթ թըշուառիս
Որ լամ՝ եւ զու կընքես մուրակ թողութեան :

Կը յօրինեմ գիշեր ցորեկ զառն մատենան
Դառն հեծութեանդ՝ որ ճննճեղքն իմ հոգին :

Ու թող թոքերս լըլկին, լեզուս սեւանայ,
Թող փրտտիմ, թող մահ բուրիմ, թող բառնամ
[կոծ

Բայց ողորմէ՛ ինծի, Աստուա՛ծ Աստուածոցն :

Թող ես դառնամ միտելօրինեաց քահանայ
Եւ գիւթաղ ինծի. սակայն, ո՛վ Անմահ,
Թաղ որ մտնամ երկնից Գաղաքն ամրապահ :

Գ

Բայց յաշաղկոտ չար քաղաք սըրտով փուտ,
Նախանձալից կը հրնշրնան միասին,
Եւ վանատան բակը նըստած կը խօսին —
Դա հերժուածող է, ծայթ է, կեղծ է եւ սուտ :

Կը բամբասին : Ու նոր ժողոված կարմիր թութ
Ըսկուտեղով ահա քայած առջեւին
Կը բաշխեն թուի բըզըրըղէ մը գինին,
Կը հըռնառն խոլոռելով բըբեր մութ :

Կ'արհամարնէ ըզմեղ, կ'ըսեն, ինք միայն
Կը փափաքի ստանալ համբաւ սըրբութեան :
Դա՛տ վարենք, դա՛տ, եղբա՛րք, մեղ պէտք է
[աւանան :

Իխանաւոր, Եպիսկոպոս ամենայն
Պէտք է գիտնան՝ դեւի է դա որոգայթ,
Պիղծ է Գրիգոր, աղանդաւոր է եւ ծայթ :

Դ

Ո՛վ սուրբ՝ ահա հրաւիրակներն որ կուգան,
Կուգան ի՛նքն՝ Մեծաւորաց տո՛ւր համար :